№ 79 Մայիսի 14 (26) 1880 Մայիսի 14 (26) № 79

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսի ընկերութիւնների մասին։—Ներքին տեսութիւն։ Նամակ Մոսկվայից։ Նամակ Ղուբայից։ Նամակ Ալաշկերտից։ Նամակ Հինգ-Նախիջևանից։ Նամակ Խասավ-Իւրտից։ Նամակ Բաքուից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Սովը Հայաստանի մէջ։ Իտալիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

Կ. ՊՕԼՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

I

Կ. Պոլսի ազգայիններից ձեռնարկած, այսպէս ասած, խոշոր գործերի մէջ, Հայկական ընկերութիւններ կազմելի գործը անկասկած մի պատուաւոր տեղ է բռնում։ Տաճկահայերի առաջադէմները աւելի ուշադրութիւն դարձրին ընկերութիւններ կազմելու վրա, մանաւանդ Ռեալինի վեհաժողովից յետ, երբ հայկական ազգի մեծամասնութիւնը սկսեց տեսնել իր ապագան աւելի բարակ քողով ծածկված և աւելի պարզ հայելիի մէջ, քան թէ նա կարող էր տեսնել այդ մինչև Ռեալինի վեհաժողովը։

Հայութեան այսպիսի մի նոր կերպարանաւորութեան շրջանում, ընկերութիւններ հիմնելը և հասարակական համերաշխութիւններ հաստատելը մի այնպիսի բնական քայլ է, որը արել է իւրաքանչիւրը այժմ անկախ փոքրիկ ազգերից, երբ նա, արթնացած, մտնելիս է եղել իր քաղաքական վերածնութեան ասպարէզը։ Ուրեմն տաճկահայերի մէջ այժմ կազմվող ընկերութիւնները ներկայացնում են իրանց երևալով մի պատմական երևոյթ, մի բնական օրէնք, որ պիտի կրկնվի անշուշտ և հայոց ազգի նոր պատմութեան մէջ, երբ այդ ազգի մեծամասնութիւնը Թիւրքիայում, դուրս գալով իր դարևոր, ամօրֆային դրութիւնից, ձգտում է ստանալ մի որոշ կազմակերպութիւն, մտնելով քաղաքական արձանագրութիւնների և քաղաքական ժամանակագրութեան դարագլուխը...

Վաղնորոյ բնական է որ հէնց այն օրից, երբ Կ. Պոլսի մէջ հասարակական համերաշխութիւնը սկսեց ստանալ քիչ թէ շատ կանոնաւոր ընթացք զանազան ընկերութիւնների ձևով, «Մշակը» շտապեց ոչ միայն եռանդոտ քարոզիչ հանդիսանալ նոցանից մէկի համար, ինչպէս Արարատեան ընկերութիւնն է, այլ ևս չը զլացաւ դարձնել իր խմբագրութիւնը այդ ընկերութեան համար մի տեսակ գործակատարութիւն և հաշուէսենեակ, ուր ամեն օր մէկը զբաղված էր լինում միայն ընկերութեան համար կոպէկներ հաշվելով։ Տեսնելով լրագրի անդուլ ջանքերը, որ նուիրված էին միայն մի ընկերութեան օգտին, շատերը «Մշակի» բարեացակամներից եկան այն անհեթեթ եզրակացութեան թէ երբ «Մշակը» այդչափ խրախուսում է «Արարատեան ընկերութիւնը» և անուշադիր թողնում միւսներին, ինչպէս օրինակ «Պիլեկեան ընկերութիւնը», «Հայկական միաբանութիւնը» և այլն, այդ նորանից է առաջ գալիս որ կամ խմբագրի համար մի տեսակ կիրք է դառել «Արարատեան ընկերութեան» գործը կամ թէ նա ձգտում է փոշի փչել տաճկահայերի աչքին, ցոյց տալով իր ամենակարող ոյժը ռուսահայոց պարբերական տպագրութեան ասպարիզում... Մինչդեռ ո՛րչափ պռատ դատողութիւններ են այդ ամենը, կարելի է տեսնել հետևեալ համարում։

Գր. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

10 ապրիլի

Այս օրերս դուրս եկաւ «Критическое Обозрѣніе»*) կիսամսեայ օրագրի VII համարը, որի մէջ գրաւում է մեր ուշադրութիւնը մեր գիտնական հայրենակից պ. Էմինի յօդուածը ֆրանսիացի Էրնէստ Ռէնանի դէմ—„Нѣсколько словъ въ защиту непризнаваемой Эрнестомъ Ренаномъ подлинности новооткрытой Апологіи Аристида» (Մի քանի խօսք ի պաշտպանութիւն Արիստիդէսի նորագիւտ ջատագովութեան, որ Էրնէստ Ռէնանը կեղծ է համարում։)—Երկրորդ տարում, երբ որ քրիստոնէութիւնը ճնչված և տանջվում էր բարբարոս կռապաշտութեան նեղութիւնների տակ, դուրս եկան քրիստոնեաների միջից մի քանի անվեհեր անձինք և սկսան ուսումնական գրուածներով պաշտպանել քրիստոնէական ուսումը կռապաշտ իշխանների և կայսրների առաջ։ Քրիստոնէութեան այդպիսի ջատագովներից մէկն էր և Աթէնքի փիլիսոփայ Արիստիդէսը, որ մի հրաշալի պաշտպանողական ճառ գրեց և ներկայացրեց Ադրիանոս կայսեր։ Այդ իրողութիւնը վկայում են իրանց գրուածներում Եւսեբիոս կեսարացին և Երոնիմոսը (երկուսն էլ IV դարում)։ Բայց այդ ճառից յունական բնագիրը կորել էր։ 1878 թ. Վինեթիկեան վարդապետներին յաջողում է գտնել հայոց բնագիրը *), որ թարգմանուած է Արիստիդէսի յիշեալ ճառից—ուրեմն յունարէնից, և լեզուին նայելով անշուշտ մեր ոսկեդարու աշխատութիւն պէտք է լինի։ Դրանք իսկոյն թարգմանում են այդ ճառը լատիներէն և հայերէնի հետ միասին հրատարակելով նուիրում են Օրլէանի արքեպիսկոպոս ականաւոր Դիւպանլուին։

Անցեալ տարվայ վերջում՝ Էրնէստ Ռէնանը տպագրելով իր «L'Eglise Chretienne» (Քրիստոնէական Եկեղեցին) գրվածը՝ յառաջաբանութեան մէջ յիշում է և վենետկեանների հրատարակած Արիստիդէսի ճառի մասին։ Նա այդ ճառը անուանում տափակ շարադրութիւն (une composition plate) և չէ հաւատում, որ երկրորդ դարում ապրող Արիստիդէսը կարողանար խօսել «Երրորդութեան», «Որդի Աստուծոյ» և «Մարիամ Աստուածածնի» վրա — այնպիսի գաղափարների մասին, որոնք՝ նրա կարծիքով՝ դեռ անյայտ էին այն դարում։ Նա միանգամայն հերքում է հայոց բնագիրը՝ նրան կեղծ անուանելով։ Պ. Էմինը իր յիշեալ յօդուածում առաջ է բերում նախ Եւսեբիոսի և Երոնիմոսի վկայութիւնները Արիստիդէսի ճառի իսկութեան մասին. յետոյ ապացուցանում է, որ եթէ II-դարում Յելլիոսը և Յուստինոսը կարող էին իմանալ ու գրել «Հօր Աստուծոյ», «Որդի Աստուծոյ» և «Հոգու» վրա—(պ. Ռէնանը սրան հակառակ չէ) ինչու չէր կարող՝ մի և նոյնը իմանալ և Արիստիդէսը։ Այնուհետև նկատում է, որ Արիստիդէսի ճառի մէջ չը կայ գործածված «Երրորդութիւն» բառը, ապա ուրեմն և դուրս է բերում դրան պ. Ռէնանը՝ իբրև փաստ։—Անցեալ օրը «Голосъ» լրագրում կարդացինք որ Փարիզում մի ֆրանսիացի դտել է Արիստիդէսի պաշտպանութեան ճառի յունական բնագիրը, որ բառ առ բառ նման է հայոց բնագրին։ Հապա, տեսնենք հիմա ինչ կասէ պ. Ռէնանը։

Մի քանի խօսք էլ Թիֆլիսի հնագիտական ժողովի մասին։—Անցեալ ամիս այստեղի հնագիտական ընկերութիւնը (Археологич. Общество) հրատարակեց մի տետրակ—„Протоколы трехъ засѣданій Тифлисскаго предварительн. комитета“ որ տեղի են ունեցել անցեալ 1879 թ. հոկտեմ. և նոյեմբ. ամիսների մէջ՝ 1881 թ. Թիֆլիսում վինելու հնագիտական ժողովի վերաբերութեամբ (археологич. съѣздъ)։ Դա շատ ուրախալի երևոյթ է. Կովկասը իր ահագին լեռներով և բազմատեսակ ազգաբնակութիւններով—Անդրկովկասը իր պատմական հնութիւններով շատ հետաքրքրական նիւթեր կարող են արտադրել հնագիտութեանը։

Յիշեալ տետրակից երևում է, որ այդ նախապատրաստական կոմիտէի մէջ պ. Երիցեանը մի յօդուած է կարդացել «Հայաստանի հնագիտական յիշատակարանների մասին»։ Այստեղ արժանի է ուշադրութեան այն կէտը, որտեղ պ. Երիցեանը հաղորդում է, թէ 1878 թ. նա գտել է Էրզնկանի մօտ՝ մի լերան վրա՝ Ս. Սարգիս մատուռի առաջ՝ հայոց Անահիտ դիցուհու անդրին՝ արոյրից (бронза) ձուլած 1¼ արշ. բարձրութեամբ և Աբալէզի պատկերը։ Զարմանալի է. ինչու պարոնը մինչև այսօր ոչինչ չէր հրատարակում այդ երևելի գիւտի մասին. ինչու չէր ուղարկում այդ արձանների լուսանկարները մի պատկերազարդ օրագրի տպագրելու։ Մենք կարծում ենք, որ նոյն իսկ Մոսկվայում հրատարակվող պատկերազարդ «Փարոս Հայաստանի» խմբագրութիւնը ուրախութեամբ կը տպէր, եթէ ուղարկէին նրան յիշեալ պատկերները։ Ինքն պ. Երիցեանը ևս համոզված է, որ այդ հնագիտական գիւտը մեծ ինտերես ունի ոչ միայն հայոց, այլ և օտարազգի ուսումնականների և հնագէտների համար. մանաւանդ որ նրա ասելով՝ մեծ վէճ էր բացվել մի քանի տարի առաջ ուսումնականների մէջ Արալէզի վերաբերութեամբ։—Վերջապէս՝ եթէ պատկերների տպագրութիւնը անհնար է՝ գոնէ պ. Երիցեանը բարեհաճէր մեր պարբերական թերթերի մէջ հրատարակել յիշեալ արձանների մանրամասն նկարագրութիւնը։ Այս տեղեկութիւնները մանաւանդ կարևոր են, որ վերոդրեալ յօդուածում պատուելի հեղինակը ամենևին չէ յիշում ինչից է արդեօք երևում, որ այդ արձանները անպատճառ Անահիտին և Արալէզինն է. գրված է արդեօք դրանց վրա, կա՛մ մի ուրիշ նշան—թէ նա միայն այդպէս ենթադրում է։ Շատ ցանկալի կը լինէր օրով առաջ ճիշդ և մանրամասն տեղեկութիւն ունենալ հայոց պանթէօնի այդ երկու նշանաւոր ներկայացուցիչների մասին, որ կարող էր մեծ լոյս ձգել մեր անմշակ և մթին դիցաբանութեան վրա։

Խ.

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Ապրիլի 15

«Մշակի» անցեալ համարներից մէկում տպված էր նամակ Ղուբայից «Ղուբեցի» ստորագրութեամբ տեղական դպրոցի հոգաբարձութեան գանձապահի վերաբերմամբ։ Որովհետև այն նամակը, գրուած լինելով կապրիզի և կրքերի բաւականացնելու դիտմամբ, հեռի է ճշմարտութիւնից, ուստի ճշմարտութիւնը վերականգնելու համար հարկ համարեցայ մի-երկու խօսք ասել։ Ղուբայի հայոց դպրոցի բացման օրից (1871 թվից) մինչի այսօր նորան վերաբերեալ հանգամանքներին ծանօթ անձերից միմիայն ես եմ. նորա մայր գումարը միշտ պահել է անկորուստ և չահեցրել է հարիւրին ոչ պակաս 10% գանձապահ Տէր-Սարգսեանցը. այս կարելի է ստուգել հոգաբարձութեան ժապաւինեալ մատեաններից, որոնք կան և այժմ իսկ. ես գիտեմ հաստատ, որ պարոնի դեռ կենդանութեան ժամանակ դպրոցական գումարներից մի քանի հարիւրներ, գուցէ և հազար ոսկին տուած են եղել տոկոսով այս կամ այն տորոնչուն, բայց այլ ևս յետ չեն ստացուել, իսկ գանձապահը լցրել է կորուստը իր սեպհականութիւնից։ Ինչ որ վերաբերում է նրան թէ՝ մի հոգաբարձու ցանկացել է դպրոցի գումարներից փոխառնուլ ապահով, գրաւներով, այդ էլ անկեղծ չէ չինծու է, որովհետև նախ դժուար թէ կարելի լինի այն հոգաբարձուին դպրոցական ամենաչնչին գումար անգամ հաւատալ, մանաւանդ որ գրաւ դնելու ազատ տուն էլ չունի, յայտնի է և երկրորդ՝ դրանով ցանկացել են միայն պ. գանձապահի սրտին դիպչել, վիրաւորել... և ուրիշ ոչինչ. և այդ շատ բնական է. հասարակութեան համար ցաւողի, հոգացողի աշխատանքը վարձը, օգուտը միշտ վիրաւորանք է լինում։ Իմ խօսքերը պ. գանձապահին պաշտպանելու համար թէպէտ փաստերի կարօտ չեն, բայց ես փաստեր էլ կը բերեմ այստեղ. ա. դպրոցի ելից և մտից մատեանները մնում են. բ. դպրոցի գումարից 1500 ր. արդէն գցուած է Պետերբուրգի արքունական բանկը տոկոսով չահեցնելու դպրոցի անուամբ, և մնացեալ գումարը չուտով կը գցուի նոյն բանկը, և գ. Շամախու վիճակային կոնսիստորիան բոլորովին համաձայն է գումարը բանկ ուղարկելուն։

Պ. Ղուբեղին կամ նրա նմանները կարող են ինձ ասել թէ՝ բանկի տոկոսով դպրոցը չի կառավարուիլ, և այս իրաւացի է, բայց դորա դէմ կա-

---

*) Սա նոր օրագիր է և հրատարակվում է Մոսկվայի համալսարանի երկու պրոֆէսսորների խմբագրութեամբ։ Սրա արժանաւորութիւնը այն է, որ կարճ միջոցում տեղեկութիւն է տալիս բոլոր ուսումնական և գրականական շարադրութիւնների մասին, որոնք լոյս են տեսնում թէ Ռուսաստանում և թէ Արևմտ. Եւրոպայում։ Այդ տեղեկութեանց հետ միասին նա մանրամասն քննում է այդ գրուածները։ Օրագրին աշխատակցում են մեծ մասամբ պրոֆէսսորները։ Առաջարկում ենք մեր բանագէտների և ուսումնականների ուշադրութեանը։

*) Սրա թարգմանութիւնը լոյս ընծայեց պ. Էմինը ռուսերէն լեզուով, Մոսկվայում 1879 թ.։

սեմ մի խօսք, որ դարձեալ իրաւացի է, դպրոցի գումարը անմահացաւ, որովհետև երբ և իցէ մի աղգասէր հոգաբարձուի դրպանը մտնելու էր ու դուրս չէր գալու. (այսպիսի օրինակներ անթիւ են. Ղուբայի եկեղեցւոյ գումարը մօտ 4000 ր. Նախկին երեցփոխան պ. Վաքիլեանցը անոյշ չարեց) բացի դրանից Ղուբայի հայ վաճառականները այժմ բաւական լաւ վիճակի մէջ են և շատ հեշտութեամբ կարող են տարեկան մի քանի հարիւր րուբլ նուիրել դպրոցին, եթէ նրանց խնդրող, դրդող լինի. ուստի պ. հոգաբարձուները քան թէ խնդրանքներով են պարապում՝ բարւոք չէ՞ որ տարենը մի երկու օր նեղութիւն կրեն փող ժողովելու։

Ս.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

Ապրիլի 25

Ցունական և ոչ Հայկական եկեղեցին Ապրիլի 23-ին կատարում է Ս. Գէորգի տօնը։ Մեր քաղաքի հայ հասարակութիւնը այնպէս նախապաշարված է թէ այդ օրը ով որ յանդգնի ֆիզիքապէս գործել, աշխատել, նա անպատճառ կայլանդակվի, կը ծուվի վրէժխնդիր սրբից, դորա համար և Ս. Գէորգի տօնը մեր մէջ կոչվում է ծառատօն։ (Մի և նոյն նախապաշարմունքը, որքան մեզ յայտնի է, տիրում է նմանապէս Էրզրումի, Դարսի, Ալէքսանդրապոլի և Ախալքալաքի հայերի մէջն էլ։ Այդպիսի մեծ վտանգից, ծուվելուց, ազատվելու համար կանայք, նա մանաւանդ յղիները, այդ օրը ոչ մի գործի ձեռք չեն զարնում, վախենալով ծռել իրանց ձեռքերը, տարերը կամ պարանոցները, և մոմեր առած խումբ խումբ դիմում են յունական եկեղեցին վրեժառու սրբի գութը շարժելու, իսկ այր մարդիկ գոցելով իրանց կրպակները դատարկաշրջիկ են լինում բաղերում և փողոցներում։

Ո՞վ պէտք է առաջն առնէ ժողովրդական այդպիսի տգէտ և վնասակար նախապաշարմունքներին, ով պէտք է աշխատի բանալ ժողովրդի աչքը, ով—եթէ ոչ, իմ կարծիքով, մեր տէր-հայրերը և մեր ժողովրդական ուսուցիչները։ Բայց կատարում են դրա իրանց սուրբ պարտականութիւնը.—պէտք է ճշմարիտը խոստովանենք—ոչ։ Ինչու համար մեր տէրտէրները իրանց քարոզներով միշտ պահանջում են մեղանից պահեցողութիւն, ծոմ և ապաշխարութիւն, ինչու մեզ միշտ սպառնում են դեւերով և դժոխքի տանջանքներով ինչու մեզ զզվեցնում են միջնադարեան փտած և հնացած գաղափարներով, ինչու, ասում ենք, յիմարաբար և անտեղի յարձակվում են դարուս-բը հակա-քրիստոնէական ոգու վրա և չեն հաւատում ժողովրդական նախապաշարմունքները, չեն քարոզում, չեն հասկացնում ժողովրդին, որ սուրբին աննելի է վրէժխնդրական ոգի ունենալ, թէ սուրբը այնպիսի բռնակալ և դաժան դեսպօտ չէ, որ իր տօնի օրը աշխատողների մարմինները այլանդակէ, նոցա կուրացնէ և կաղացնէ. հայրեր, յայտնեցէք ժողովրդին որ սուրբերը մինչև անդամ իրանց քարկոծողների, իրանց տանջողների համար աղօթում էին. ուսուցէք ժողովրդին թէ կիրակի օրը, որ նուիրված է Աստուծոյ, մենք առանց երկիւղի ամեն գործ էլ անում ենք և բարի ողորմած Աստուածը դորա համար մեզ չի պատժի, ինչու համար, սուրբը՝ Աստուծոյ ծառան է, պէտք է պատժէ և ասէ, այսպէս կոչված, տօնաղանցներին. վերջապէս դուք, քահանայքդ, համոզեցէք ամբոխին որ ճշմարիտ հաւատը կամ յարգանքը պէտք է առաջ գայ ոչ թէ երկիւղից, վախից, այլ—սէրից։ (Բայց հոգեորականներին թերևս աւելի ձեռնտու է նախապաշարված ժողովուրդ ունենալ)։

Իսկ մեր ժողովրդական ուսուցիչները մարտնչում են արդեօք հասարակութեան այդպիսի մոտիապաշտութիւնների դէմ, կարողացել են գոնեայ իրանց յանձնված աշակերտների սրտից և մտքից արմատախիլ անել այդպիսի վնասակար տգիտութիւնները.—այստեղ էլ պէտք է ամօթով և կարմրելով խոստովանել որ մեք մեր պարտքը չենք կատարել և չենք ճանաչել. տգիտութիւնը, նախապաշարմունքը իրաւ լոյսի հզօր թշնամիներն են, բայց և ուսումնարաններն էլ զօրաւոր գործիքներ են այդ հզօր թշնամին խորտակելու և ոչնչացնելու։ Ցաւալի է ասել որ մեր ուսումնարանները ոչ թէ միայն անուշադիր են դէպի ժողովրդական նախապաշարմունքները, այլ և իրանք իրանց կողմից օգնում են այդպիսի նախապաշարմունքներին աւելի և աւելի հաստատ արմատ ձգելու ժողովրդեան մէջ։ Ահա թէ ինչպէս, այդպիսի օրերում աշակերտների մեծ մասը, համարեա կէսը, բացակայ է լինում ուսումնարանից և պ.պ. ուսուցիչները չեն ուզում գլխացաւ քաշել և ներկայ գտնվող կէսի համար դասախօսել և նրանց էլ տուն են արձակում, չը մտածելով թէ այդ ուրբան վատ հետևանք է ունենում, որովհետև այդպէսով աշակերտներին կարծել կը տան թէ ուսուցիչներն էլ հաւատում են ծռատօնին, թէ նոքա էլ իրանց նման վախենում են ծռվել և այլանդակվել որ չեն դասախօսում, այդպէս չի համոզվի և ամբոխն էլ։

Իսկ մեր կարծիքով փոխանակ եկող աշակերտներին տուն ուղարկելու, ուսուցիչները պարտական են չը նայելով նրանց սակաւաթուութեանը դասախօսել և գործնականապէս ցոյց տալ աշակերտներին, որ իրանք ահա դասարանում նկարում են, երգում և գրում, բայց ոչ մէկի ձեռքը և բերանը չէ ծռվում, ոչ մէկի դէմքը չէ կերպարանափոխվում և այլն։

Քահանաներ և ուսուցիչներ պարաքերս չեմք կատարում։

Դ.

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

12-ին ապրիլի

Այս քանի ժամանակներս «Մշակ» և «Մեղու Հայաստանի» լրագրներում երևեցան թղթակցութիւններ մեր քաղաքից, որ վերաբերում էին խակապէս մեր Նախիջևան դաւառի ջրի պակասութեանն և եղած ջրերի վրա ջրպետ կարգելու կարեոր և միանգամայն Նախիջևանի համար հացի խնդիրներին։

«Մշակում» յարգելի Օտարականը իր օտար աչքերով օրինաւոր և իրաւացի կերպով նկատել էր Նախիջևանին ներկայ տարում սպառնացող թանկութեան պատճառները։ Նա տեսնում է, թէ ինչպէս այս 5—6 տարի ջրպետութեան պաշտօնը ստանձնած է մի թուրք քալրլի, որ իր քէֆի և անսահման իշխանութեան տակ ձգելով Նախիջևանի ջրերի իրաւունքը, սկսում է կեղեքել միամիտ ժողովուրդը։ Այդ անում է նա շատ ճարպկութեամբ և հեռատեսութեամբ,—չտերին իր հետ մանածած կօղակներով սպառնալիքներ է տալիս և ծեծում, չտերին չողոքորթում և կթում է պարսկական յատուկ միջոցներով և չտերի բերանը մի կտոր լաչ ձգելով։—Բայց ինչու մինչև հիմայ վարում է նա այդ պաշտօնը, մինչդեռ ուրիշ երկրներում այդ պաշտօնը յանձնում են այնպիսի մարդկանց որոնք յայտնի են լինում ժողովրդի մէջ իբրև յարգելի, արդարադատ և անչահասէր մարդիկ։ Որովհետև մինչ հիմայ նա իր նեցուկն որոնել և որոնում է կաշառակերների մէջ, ուր մի այսպիսի ժողովրդի բողոքները, ինչպէս է Նախիջևանի ժողովուրդը, միշտ մնացել և մնում են ձայն բարբառոյ յանապատի։

Այս քանի շաբաթ է Նախիջևանի ժողովուրդը հաւաքվում է ջրպետ ընտրելու։ Ամեն օր գալիս է խեղճ գիւղացին քաղաքը, երեսի վրա թողնելով իր բոլոր երկրագործական աշխատանքը։ Հիմայ գիւղացու ամեն մի ժամը ոսկի արժէ։ Այժմս գիւղացու այն ժամն է, որ իր հացը բահը գետին խփելով է ծամում, որ չանցնի անկարկութեան ժամանակը, չանցնի կաւատ և կորզակ ցանելու միջոցը—հիմայ նա այդ ամենը թողնում գալիս է որ իր ցանքերին կենդանութիւն տուող ջրին ջրպետ ընտրէ...

Գալիս գնում է ամեն օր ժողովուրդը, և դարձեալ գոռում, կոչում, բողոքում է, թէ մեզ քաբլայի Իսմայիլը ջրպետ հարկաւոր չէ... բայց անարդար մարդիկ և հիմայ չեն կամենում լսել նրա արդար բողոքներին։ Չեն կամենում ազատել խեղճ ժողովուրդը մի մարդու ձեռից, որ ակներև հարստահարում է նրան... Չէ, բարի մարդիկ, լաւ բան չէ ձեր արածը—այդ մարդը վաղ թէ ուշ պէտք է թողնէ այդ պաշտօնը, դուք մի զոհէք մի ժողովուրդ մէկի հաճութեան, որ չուտ կը հեռանայ ասպարիզից։ Մտաբերեցէք ժողովուրդը, որի բարբրութիւնից կախուած է թէ քաղաքի թէ դաւառի և թէ տմենի երջանկութիւնը։

Իսկ դուք, նախիջևանցիք, լաւ նայեցէք,—այս տարի, որ այդքան դժուարութիւններ կրում էք, նրանից է, որ ձեր ամբարները չը լցուեցան ձեր մարդարիտ ցորեանով, որ սրանից մի քանի տարի առաջ կերակրում էր ոչ միայն ձեր քաղաքը, այլ և Օրդուպատ և Ագուլիսը և ուրիշ շատ տեղեր։—Նրանից՝ որ դուք ձեր սեփականութիւնը ձեր լրուութեամբ և ձեր անհեռատեսութեամբ վաճառել էիք մի մարդու, որ հիմայ ձեզ թէ բարոյապէս և թէ նիւթապէս տանջում է։ Եւ վերջապէս այդ ամենը նրանից է, որ ձեր բարի ջրպետը ձեր սեփական ջուրը վաճառեց թուրքբեկերին, որ ուռոգեն իրանց արտ ու անդաստանը պարտեզ ու այգին։ Տեսել կրել էք այս ամենը և կարծեմ փորձուած էլ պէտք է լինէք, որ այս անդամ էլ ձեր իրաւունքը և ձեր սեփականութիւնը չը վաճառէք այդպիսի մոլեռանդների։

«Մեղուի» մէջ արժանապատիւ հայր Դոլմատեանը նոյնպէս ակնարկում է դաւառիս նուազ ջրաբաշխութեան պատճառները։—Նախիջևանի Ջայ կոչուած գետակի ջուրը բաւական չէ ուռոգելու այս տեղի ցանքը, որ տարուայ երկու ամիսներում համարեա ցամաքում է և Եղիայի երաշտութեան հասցնում Նախիջևանցոց։ Ի՞նչով կառնուի այս չարեաց առաջը։ Դրա համար արժանապատիւ Նամակագիրը մի յարմար առաջարկութիւն է անում Նախիջևանցոց, որ միանայ ամբողջ դաւառը և բազարչայ կոչուած մտահոս գետը, որ հոսում է Սիւնեաց լեռներից դարձնէ դէպ այս կողմ—Նախիջևան։

Այո՛, շատ լաւ մտածած և արդիւնաւոր միտք է, և իրագործելը ոչ շատ դժուարին, իսկ արդիւնաւորութիւնը մեծ։ Եթէ այդ գետը դէպ Նախիջևան անցնի, այն ժամանակ կարելի է հերկել և ցանել Գիւղնութու ամբողջ դաշտը, որ այսքան տարի ամուլ մնացել է, կարելի է մշակել մեծ հողեր Նախիջևանի մօտ և այն ժամանակ Նախիջևանը կը նորոգուի իր փլատակներով և կը դառնայ նոյն վաղեմի Նայեան դրախտավայրերը, որ շատ ցանկալի է լինէ և իմ համաքաղաքացիներիս։

Ս. Ա.

ՆԱՄԱԿ ԽԱՍԱՎ-ԻԻՐՏԻՑ

1 ապրիլի

Յօգուտ Վանի քաղցած հայերի խնդրեմ ընդունէք 41 ր. գումարը և տպէք անունները նուիրատուաց։

Գ. Լիսէցեանց 3 ր., Գէորգ Գրիգորեանց 3 ր., Գէորգ Սուլտանեանց 3 ր., Ռոստոմ Բէգ-Մաղաթեանց 3 ր., Գրիգոր Գեղամեանց 5 ր., Антонъ Боровскій 1 р., Կարապետ Դերսիկեանց 1 ր., Սարգիս Քալանթարեանց 1 ր., Բարսեղ Վելիկանեանց 1 ր., Н. Серафимовичъ 5 р., Е. Серафимовичъ 2 р., С. Серафимовичъ 3 р., Միքայել Գեղամեանց 5 ր., Արսէն Բարիկեանց 3 ր., Միքայել Բարիկեանց 1 ր., Վարդանէսեանց 1 ր։

Ընդամէնը 41 ր։

Գրիգոր Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

12 ապրիլի

Կրկին դիմելով քանի մի երիտասարդաց հաւաքեցի փոքր նուէր։ Ահա ուղարկում եմ ձեզ և խնդարհարար խնդրեմ ընդունէք յօգուտ Վանի սովատանջ եղբայրներին. գումարն է 17 բուբլի 80 կ., երկու անգամ փոստի ծախս 80 կ. դուրս գալով, կը մնայ 17 բուբլի և խնդրեմ տպել ձեր լրագրի մէջ նուիրատուների անունները։

Ներսէս Արդարեանց 1 ր., Նիկողայոս Թէրզեանցով 1 ր., Աւետիս Յովսէփեանց 1 ր., Անոյշ ոմն 2 ր., Համբարձում Գէորգեանց 1 ր., Խաչատուր Բաբայեանց 50 կ., Եփրեմ Նազարով 1 ր., Ալահվերդի Յակովբեանց 40 կ., Մկրտիչ Շամչիեանց 50 կ., Անդրէաս Ս. Շահբազեանց 1 ր., Ստեփան Բաղալեանց 1 ր., Մկրտիչ Գ. Սհակեանց 1 ր., Ղուկաս Ղուկասեանց 1 ր., Գրիգոր Ոսկանեանց 1 ր, Անոյշ ոմն (պարսիկ) 1 ր., Արտեմ Սաղիեանն 3 ր., Ղուկաս Բաղերով 40 կ։

Ընդամէն է 17 ր., 80 կ։

Սիմէոն Մ. Իզբաշեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ռաշտ, 26 մարտի

Սովատանջ եղբայրների համար մեծ ցաւով լսեցուած՝ «Մշակ» պատուական լրագրի էջերում յայտարարուած այդ անտանելի սովի համար, օտարական տեղումն գտնվող ազգակիցներս նուիրատուութիւն հաւաքեցինք 200 բուբլի և նամակիս ծոցով վերոյիշեալ գումարն ստանալէն յետոյ, կը խնդրեմք խմբագրութիւնս նուիրատուների անունները տպէք։

Աւէքսանդր Ասլանեանց 10 ր., Անոյշ ոմն 35 ր., Ղազար Յակովբեանց 11 ր. 25 կ., Թուման Զարաֆեանց 10 ր., Առաքել Մնացականեանց 10 ր., Ողորմիր տէր 11 ր. 25 կ., Յակոբ Սաֆարեանց 11 ր. 25 կ., Անդրէ Սեւրուգին 7 ր. 50 կ., Գանրար Տէր-Միքայելեանց 7 ր. 50 կ., Ժողեփ Ժանով 6 ր. 12½ կ., Սարգիս Իւանեանց 6 ր., Յակոբ Շահնազարեանց 5 ր. 62½ կ., Յովհաննէս Վանեանց 5 ր. 62½ կ., Ներսէս Տէր-Զաքարեանց 5 ր. 62½ կ., Խաչակ Մելիք-Յովսէփեանց 5 ր., Եփրեմ Զաւատեանց 5 ր., Միքայել Աղաբաբայեանց 4 ր. 87½ կ., Գրիգոր Յովսէփեանց 3 ր. 75 կ., Աւետիս Յովսէփեանց 3 ր. 75 կ., Միրզա Պարսնեանց 3 ր. 75 կ., Մահտեսի Սողոմոն Բատալեանց 3 ր. 75 կ., Գաւիթ Յովսէփեանց 3 ր. 75 կ., Յովհաննէս Բարաթչեանց 3 ր. 75 կ., Կարապետ Ներսէսեանց 3 ր 75 կ., Իւան Խաչղուլեանց 3 ր., Աստուածատուր Տէր-Օհանեանց 1 ր. 87½ կ., Յովսեփ Ղուկասեանց 1 ր. 87½ կ., Ստեփանոս Յարութիւնեանց 1 ր, 87½ կ., Գաբրիէլ Յարութիւնեանց 1 ր. 87½ կ., Դաւիթ Շահկալտեանց 1 ր. 87½ կ., Արտեմ Սարաջով 1 ր. 12½ կ., Անոյշ ոմն 1 ր. 12½ կ., Տէր-Խաչակ Ամբարջեանց 75 կ., Աւագ Իւղբաչեանց 75 կ., որոյ գումարն է 200 բուբլ։

Ղազար Յակովբեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գրիգոր Արծրունու դասախօսութիւնը իրանից անկախ պատճառներով ուրբաթ օր, մայիսի 16-ին դեռ ևս լինելու չէ և դարձեալ յետ է գցվում։ Իր ժամանակին կը յայտնենք «Մշակի» մէջ երբ կը որոշվի դասախօսութեան օրը։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, որ ապրիլ ամսի 26-ին հայ թատրոնասէրների խումբը ներկայացրեց մարդասիրական ընկերութեան դահլիճում յօգուտ Վանայ սովատանջների «Վարդանանց պատերազմ»։ Ներկայացումը թէև թոյլ անցաւ, բայց հասարակութիւնը ներողամիտ գտնվեցաւ ի նկատի ունենալով ներկայացման նպատակը։»

—

Մեզ գրում են, ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ. «Ապրիլի վերջին օրերում հացի գինը բարձրացաւ մինչև 9 բուբլ. այդ չը տեսնված թանգութիւնը գրգռեց վաճառականների չահասիրութիւնը, որոնք չտապեցին, զանազան կողմերից ալիւր բերել. միւս կողմից էլ չարչիները բացարեցին իրանց փակված ամբարների դռները, և այսպիսով հացի գինը իջաւ մինչև 5 և 4½ բուբլ։ Պատմում են, թէ տեղիս երևելի կալուածատէր խանը, չը կամենալով որ հացի գինը իջնի, ցանկութիւն էր յայտնել ինքն գնել բոլոր հրապարակի վրա գտնվող ալիւրը, իսկ այդ չաջողվեցաւ նրան։»

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են որ ապրիլի 27-ին խիստ տխուր կերպով Ս. Գէորգ եկեղեցում կատարվեցաւ սրբազան Գաբրիէլ արքեպիսկոպոս Այվազովսկու հոգեհանգիստը։ Ժողովրդից ներկայ էին շատ փոքր թուով մարդիկ։ Ցեղիս յայտնի վարդապետը վերջապէս գնաց Էջմիածին և Նախիջևանի երկպառակութիւնները առժամանակ գոնէ դադարեցան։ Ցանկալի կը լիներ, եթէ Էջմիածինը Նախիջևանցիների պահանջներին յարմար մի յաջորդ նշանակէր։

—

Մեզ գրում են ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ, որ մայիսի 2-ին, Վաղարշապատի սրիկաների և օշականցիների մէջ պատահեցաւ մի սարսափելի կռիւ։ Կռիւը այն աստիճան կատաղի էր, որ իւրաքանչիւր կողմից երեսուն հոգուց աւելի վիրաւորվեցան։ Մի քանիսը այնպիսի սաստիկ վէրքեր են ստացել, որ հազիւ թէ կարող են ապրել։ Եթէ պօլիցիան ուշ հասնելու լինէր, գործը կարող էր աւելի վատ կերպարանք ստանալ։ Ցաւալին այն է, որ այդ անցքը պատահեցաւ Ս. Էջմիածնի վանքի պարիսպների մէջ, և վարդապետները հեռու կանգնած, զուարճանում էին այս տեսարանով։ Կռիւի պատճառը որպէս պատմում են, միրաւի (ջրաբաշխի) ընտրութիւնն է եղել, որ երկպառակութիւն էր պատճառել երկու գիւղերի հասարակութեան մէջ, որոնք երկուսն էլ պատկանում են Ս. Էջմիածնին։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են, որ հացը օրըստօրէ թանգանում է. կորեկի մի խալվարը (30 պուդ), որ առաջ արժէր 2—3 բուբլ, այժմ 150 բուբլով չէ ճարվում. ցորենի խալվարը ծախվում է 200 բուբլով. միւս պաշարէղէնները դրանց համեմատ թանգ են։ Ալաչկերտի և Բայազէտի կողմերից շատ հայ գաղթականներ անցել են Իգդիրի կողմերը և մուրացկանութիւն են անում։ Նրանք գանգատվում են Ս. Օհաննու վանքի վանահայրից և Կ. Պոլսի սովելոց մասնաժողովի ներկայացու-

ցիչներից, որոնք այնքան սակաւ կարողանում են լցուցանել սովատանջ ժողովրդի պէտքերը, որ հազիւ թէ կարելի է լինում պահպանել ժողովրդի կեանքը, և այս պատճառով նրանք թողնում են հայրենիքը և գաղթում են։

—

Մեզ գրում են Ն.-ԱԴՈՒԼԻՍԻՑ, որ այս կողմերի մահմեդական ազգաբնակութեան զրութիւնը հացի թանգութեան պատճառով աւելի անտանելի է դարձել։ Հայերը փողեր հաւաքելով, հոգաբարձութիւններ կազմելով, և այլ այսպիսի միջոցներով օգնում են միմեանց, բայց մահմեդականների մէջ այս տեսակ ձեռնարկութիւններ չը կան և խումբերով դիմում են դէպի հայերի տները և հաց են խնդրում։

—

ՄՕԶԴՈԿԻՑ մեզ գրում են, որ տեղային օրիորդաց դպրոցը չունէր սեփական տուն, իսկ այժմ պ. Պետրոս Դանջումեանցը յանձն է առել իր ծախսով կառուցանել Ս. Ստեփանոս եկեղեցու դաւթում մի առանձին տուն ուսումնարանի համար։ Բացի երեք հայոց եկեղեցիներից այս քաղաքում կայ և հայ-կաթոլիկների մէկ եկեղեցի, որ ունի մինչև 30 տուն ժողովուրդ։ Դրանք չեն մասնակցում ազգային գործերում և իրանց միշտ անջատված են պահում լուսաւորչականներից։ Կենսական պիտոյքների գները չը նայելով որ համեմատաբար շատ էժան են այս քաղաքում, այսու ամենայնիւ գողութիւնները օրըստօրէ աւելանում են։

—

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ, «Մարդ. ընկերութիւնը», որ իր դահլիճը տալիս է թատրոնասէրների խմբին ներկայացումների համար, խիստ անտակտ և անխիղճ կերպով է վարվում նրանց հետ։ Թատրոնասէրներին զանազան դժուարութիւնների մէջ դնելով, ընկերութիւնը ոչ միայն թուլացնում է նրանց եռանդը, այլ և շատ արգելքներ է առաջ բերում թատրոնական գործի յառաջադիմութեանը այդ քաղաքում։»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ հաղորդում են, որ «Մարդ. ընկերութիւնը», որպէս թատրոնի վերաբերութեամբ, նոյնպէս և իր հիմնած ընթերցարանի վերաբերութեամբ զանազան դժուարութիւններ է ստեղծում։ Օրինակ, պահանջում է ընթերցարանին անդամ գրվել ցանկացողներից, որ նրանք նախապէս խնդիրք ներկայացնեն ընկերութեանը և ստանան նրա հաճութիւնը։ Վերջին օրերում ընթերցարանի կանոնադրութեան յօդուածների շարքում մի յօդուած ևս աւելացաւ. թէ ով որ ընթերցարանի գրապահին կը վիրաւորէ, լուծված կը լինի ընթերցարանի անդամակցութիւնից. Զը գիտենք ինչ կապ ունի գրապահի անձնաւորութիւնը ընթերցարանի հետ։ Բայց եթէ նոյն ինքն գրապահը վիրաւորելու լինի ընթերցարանի անդամներին, այդ մասին կանոնադրութիւնը լռում է։

—

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ, որ վերջին ժամանակներում խիստ յաճախ սպանութիւններ են կրկնվում։ Մի շաբաթվայ մէջ սպանել են մի հայի, մի ռուսի է մի Թուրքի, որի կնոջն էլ վիրաւորել են։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են, որ հացի թանգութիւնը օրըստօրէ սաստկանում է, թէև ցանքի ժամանակ է, բայց տակաւին ոչինչ չեն սերմանել, որովհետև ժողովուրդը իր օրեկան ապրուստը հազիւ կարողանում է հայթայթել։ Սովելոց համար կազմված մասնաժողովը դեռ ևս մի նշանաւոր գործողութիւն չէ արել, և հասարակութիւնը ցանկանում է, որ նա հաչիւ տար իր հաւաքած փողերի գործածութեան մասին։

—

ԹԻՖԼԻՍԻ հայոց թատրոնական մշտական խումբի անդամ պ. Սուքիասեանը խնդրում է մեզ յայտնել, որ հինգշաբթի, մայիսի 15-ին իր բենեֆիսին նշանակված պիեսան իրանից անկախ պատճառներով փոփոխվում է։ Նրա տեղ կը խաղացվի «Գիօն Ժուան», կոմ. 5 արար. հեղ. Մոլիերի և «Ցօտօ», վոդ. 1 արար.։ Վոդեվիլին պ. Սուքիասեանի խնդիրքով կը մասնակցեն տ. Փաշայեան-Տէր-Գրիգորեան և պ. Տէր-Գրիգորեան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

—

Հայաստանի սովելոց վրայ անցեալ շաբաթ օրը մեր հրատարակված մէկ խմբագրական յօդուածին մէջ դիտած էինք թէ անգղիական մամանախումբն՝ երկու ամսէ 'ի վեր դրամ հաւաքելուն հակառակ՝ զոհացուցիչ արդիւնք մը չէր կրցած գոյացնել տակաւին։ Թայմզի վերջին թիւերէն միոյն մէջ կը տեսնեմք թէ Լէտի Սթրէնկֆօրտ ալ մեր գանգատը կընէ։ Ցիշեալ լրագիրը «Բրդաստանի և Հայաստանի մէջ սով» խորագրով այս ազնուամիտ տիկնոջ մի նամակը կը հրատարակէ, յորում Լէտի Սթրէնկֆօրտ կըսէ.—«Վստահ եմ որ կը նեղէք ինձ ձեր ընթերցողաց ուշադրութիւնն հրաւիրել Կ. Պոլսէն քաշուած և Թայմզի սիւնակներուն մէջ այսօր (մարտ 6) հրատարակուած հեռագրոյ մը վրայ, որ Բրդաստանի և Հայաստանի սովալլուկ ժողովրդեան աղեկտուր թշուառութիւնները կը նկարագրէ։ Քանի մը շաբաթ առաջ ապոնց օգնութիւն հայցնելու նպատակաւ կազմուած մասնախումբ մը՝ թէև Լորտ Սալիսպըրիի, Քէնթէրպըրիի Արքեպիսկոպոսին, Լորտ Շաֆթըսպըրիի, Սըր Հէնրի Բոլինարնի և այլ նշանաւոր անձանց կողմէ հաւանութիւնն և մեծ աջակցութիւն գտած էր, մինչև ցարդ մի միայն 1100 Անգլ. ոսկի կրցաւ հաւաքել, որ կաթիլ մը ջուր է այդ թշուառութեան Ովկէանին մէջ։ Այդ երկիրները մեղնէ օ՛րչափ ալ հեռի լինին միջոցի կողմանէ, մարդասիրութեան և բարեգործութեան տեսակէտով միշտ խիստ մօտ են մեզ, և վաճառականութեան ապագայ շահուց համար ալ կարևորութիւն ունին։ Ուստի կը խնդրեմ ձեզնէ որ մեր ջանից օգնէք՝ ջերմ հրաւէր կարդալով Անգլիական ժողովրդեան, որպէս զի թէ՛ իբր քրիստոնեայ ժողովուրդ մը, և թէ՛ իբր երջանկագոյն երկրի մը բնակիչներ, իրենց ձերքէն եկած ամեն օգնութիւնն ընեն յիշեալ դաւառաց ժողովուրդն ամբողջապէս կորնչելու վտանգէն ազատելու համար։ Ես, և մեր (Անգլիական մամանախումբին) յայտարարութեանց մէջ անուններն յիշուած անձինք՝ հանգանակութիւններն ընդունելու պաշտօն ունիմք։»—Լէտի Սթրէնկֆօրտի յիշած հեռագիրը՝ Թայմզ լրագրին Պ. Պօլսոյ թղթակցին կողմանէ մարտ 5 թուականաւ քաշուած հետևեալ հեռագիրն էր, որ Հայաստանի սովուն վրա մայրաքաղաքիս Հայ լրագրաց հրատարակած տեղեկութեանց մէկ բովանդակութիւնն է։—«Աղեկտուր լուրեր կուգան Հայաստանի սովահար գաւառներէն։ Միայն Վանայ մէջ արդէն 52 հոգի սովամահ եղած են կըսուի։ Հազարաւոր զիւղացիք մօտակայ Պարսկական գաւառները դաղթել կը ջանան, ճանբայները թանձր ձիւնով պատած լինելով շատ մարդիկ ուղևորութեան միջոցին ցուրտէ և յոգնութենէ կը մեռնին։»

Այսպէս ահա, շնորհիւ անհեռատեսութեան կամ անհոգութեան, գործերն ա՛յսպիսի վիճակի մը հասած են Հայաստանի ամենէն բազմահայ գաւառաց մէջ, որ եթէ ազգը մինչև ցարդ ցուցածէն բոլորովին տարբեր հայրենասիրութիւն մը ցուցնելով՝ անմիջապէս օգնութեան չը հասնի, երկրաչափական ճշմարտութեանց չափ ստոյգ է որ հազարաւոր Հայեր, և անոնց հետ անշուշտ ուրիշ մարդիկ ալ՝ սովամահ պիտի լինին, կամ ասդին անդին պիտի ցրուին՝ թշուառադոյն վիճակի մը մէջ գտնելու իրենց թըշուառ կենաց վախճանը։ Մեք ընդհանրապէս կը սիրեմք ցնորքներով ապրիլ, և կը կարծեմք թէ սովելոց Հայկական մասնախմբին քանի մը շաբաթը մի անգամ Ալաշկերտի կամ Պայազիտի և կամ Վանայ կողմը դրկել կրցած 500-ական կամ 600-ական ոսկիներն այս անհուն թշուառութեան առջև նշանակութիւն պիտի ունենան։ Կը ցաւիմք որ այս հանգանակութեան մասնակցողներէն հարիւրաւոր ազգայինք մի միայն դժնդակ պարտականութիւն մը կատարած լինելու համար և կամ յամօթոյ քանի մը ղրուշ կուտան. այնպիսի անձինք, որք առանց իրենց պիւժէին մէջ անդարմանելի շփոթութիւն պատճառելու կրնային քանի մը մէճիտիէ կամ քանի մ'ոսկի տալ այս սովատանջ Հայոց օգնութեան համար,—բաւական կը համարին տասն ղրուշ կամ աւելի քիչ տալ, թերևս մտածելով որ լրագրոյ մը մէջ իրենց անունը տող մը տեղ գրաւելու համար անկեց աւելի վարձք չը պիտի պահանջուէր։ Դարձեալ այնպիսի անձինք, որք առանց մեծ զոհողութիւն մ' ըրած լինելու կրնային քանի մը հարիւր ոսկի տալ, հինգով տասնով կը բաւականան։ Այնպէս չէ սակայն որ ազգ մը կը փրկուի վտանգներու ամենէն սարսափելիէն, այսպէս չէ որ հայրենասիրութիւն ու ազգասիրութիւն 'ի գործ կը դրուի, և այսպէս չէ որ մարդասիրութեան պարտականութիւնները կը կատարուին։ Մեր ամեն բարի և օգտակար ձեռնարկները մի միայն յոյսեր եղած են, և ցաւալի է որ մինչև ցարդ մեր հանգանակութիւններն ալ տարբեր հանգամանք մը չեն ունեցած։

Ուստի դարձեալ կը կրկնեմք մեր հրաւէրն առ համայն ազգայինս, որպէս զի վտանգին մեծութիւնն և վիճակին ծանրութիւնը լրջօրէն ի նկատ առնելով՝ փութան իրենց բոլոր կրցածովն օգնութեան հասնիլ մեր սովատանջ ազգայնոց։ Ցիշելու է որ հոս ամեն երեկոյ ամեն Հայու տուն առաւել կամ նուազ տարբերութեամբ եղած անօգուտ ծախքերը շաբաթներով հարիւրաւոր Հայ ընտանիքներ ըստոյգ մահէ մ'ազատելու բաւական կը լինին Հայաստանի դաւառաց մէջ, եթէ այդ անօգուտ ծախքերն ընող ազգայինք՝ բարեգործութիւնն ու ազգասիրութիւնը դէթ վայրկենի մը համար մարմնական հաճոյքներէ վեր բռնել գիտնան։ Ցիշելու է որ մեծ վտանգաց առջև մեծ զոհողութիւնք հարկ են և թէ երկու երեք ամսէ ի վեր հազիւ 3—4000 ոսկի տալով՝ ազգը զոհողութիւն կոչուելու բան մը չէ ըրած տակաւին։ Վերջապէս, յիշելու է թէ մեք այժմ սովուն ամենասաստիկ ժամանակին մէջ եմք, թէ ամեն դանդաղութիւն մահաբեր է այժմ, և թէ ամեն անոնք, որ քիչ շատ մարդասիրական և ազգասիրական զգացմունք կը կրեն իրենց սրտին մէջ, այնպէս պէտք է գործեն, որ իրենց օգնութիւնները այս երկու երեք ամիսներուս մէջ կարենան զգալի սփոփանք մը յառաջ բերել մանաւանդ Վանայ, Պայազիտի, Ալաշկերտի և Բասենի սովեալ ազգայնոց վիճակին։

Միւս կողմէն, կը սիրեմք յուսալ որ Տիկին Սթրէնկֆօրտ նախանձելի օրինակ մը պիտի լինի մեր Հայ տիկնանց, և ասոնք ալ թէ իրենց մէջէն և թէ օտարազգի տիկնանց ՝ի օգնութիւն հաւաքելու համար ամեն կրցածնին պիտի ընեն։ Մեծաւ զոհութեամբ կը տեսնեմք թէ արդէն այսպիսի շարժում մ'եղած է, և թէ Հայ տիկնանց մասնախումբ մը կազմուած է Հայաստանի սովատանջ ազգայնոց համար օգնութիւն հաւաքելու զովելի նպատակաւ։ Իրաւ է որ այս ձեռնարկն աւելի կանուխ կրնար լինիլ, բայց բարեգործութիւնը բարեգործութիւն է միշտ, և այժմ իսկ հայ իգական սեռն իրական օժանդակութիւն մը կրնայ մատուցանել մեր թըշուառ ազգայնոց օգնելու համար եղած ջանից։ Հը յուսամք որ հայ տիկնանց մասնախումբն յաջողութեամբ կը կատարէ իւր պաշտօնն, և ամեն կողմէ համակրութիւն ու աջակցութիւն վայելելով, իւր ազգասիրական և մարդասիրական ազնիւ ձեռնարկն արժանապէս 'ի գլուխ կը հանէ։

(Մասիս)

ԻՏԱԼԻԱ

—

Լրագիրների մէջ տպված է հետևեալ թղթակցութիւնը Հռօմից։

Իտալիայի զինուորական բիւդժետը առանձնապէս դրաւում է Հռօմի քաղաքական շրջանների ուշադրութիւնը։ Այդ բիւդժետի թուերից քաղաքագէտները կամենում են իմանալ այժմեան կառավարութեան հայացքները, նրա յարաբերութիւնները միւս պետութիւնների հետ և որոշել արդեօք խաղաղութիւն է լինելու, թէ պատերազմ։ Զատկից առաջ իտալական կառավարութիւնը մեկնեց իր հայացքները Իտալիայի յարաբերութիւնների մասին օտար պետութիւնների հետ. կառավարութեան այդ յայտնութիւնները հանգըստացնող բնաւորութիւն ունէին։ Այնուամենայնիւ իտալացի քաղաքագէտները պատերազմ էին զուշակում, 'ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այս տարվայ զինուորական ծախսերի բիւդժետը, անցեալ տարվայ հետ համեմատելով, մեծացրած է։ Իսկապէս զինուորական բիւդժետը շատ անշան թւով է շատացրած և այդ հանգամանքը կառավարութիւնը մեկնում է նրանով, որ մի քանի մթերքները թանգացել են և բացի այդ որ զինուորական վարչութեան մէջ հարկաւոր է մի քանի վերանորոգութիւններ մտցնել։ Առհասարակ զինուորական բիւդժետի շատանալը պէտք է առիթ չը տայ պատերազմի մասին խօսելու, բայց Իտալիան մեծ պետութիւն է և իր փոքր հասակում սիրում է հետևել միւս պետութիւնների օրինակին։ Մեծ պետութիւնները վախենում են պատերազմից և Իտալիայի քաղաքագէտները նոյնպէս պարտականութիւն են համարում պատերազմի ապասել։

Իտալացիների նշանաւոր մեծամտութիւնը պատերազմ բոլորովին չէ ցանկանում, միայն անհրաժեշտ է համարում պատրաստ լինել, այնուամենայնիւ այդ պատրաստութիւնն էլ միայն պաշտպանողական բնաւորութիւն ունի։ Իտալացիները վախենում են որ Աւստրիան կաշխատէ խլել Իտալիայից իտալական այն նահանգները, որոնց նա վերջին 20 տարիների ընթացքում կորցրել է։ Իտալացիք կամենում են պատրաստ լինել և հարկաւոր դէպքում պաշտպանել իրանց հայրենիքի ամբողջութիւնը։

Իտալացիները չափազանց հետաքրքրվում էին անգլիական պարլամենտական ընտրութիւններով։ Նրանց կարծիքով եւրոպական պատերազմը կամ խաղաղութիւնը այդ ընտրութիւններից էր կախված։

Նրանք հաւատացած էին, որ, եթէ անգլիական պահպանողական կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ, Բիկոնսֆիլդի մինիստրութիւնը կը պաշտպանէր Աւստրո-գերմանական դաշնակցութիւնը, իսկ Աւստրիան պատերազմ կը յայտնէր Արևելքում։ Իտալացիների համար մի և նոյն էր, թէ ի՞նչ տեսակ պատերազմ կը լինէր դա, միայն նրանք մտածում էին, որ ուժեղ դաշնակից ունենալով, Աւստրիան կարող էր անհանգստացնել Իտալիային։ Անգլիական ընտրութիւնների ժամանակ ազատամիտ կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ, կազմվեցաւ Գլադստոնի մինիստրութիւնը և իտալացիք հանգստացան, որովհետև գիտեն, որ Գլադստոն Աւստրո-Գերմանական դաշնակցութիւնը չի պաշտպանի։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՎԻԵՆՆԱ, 11/23 մայիսի։ Սպասում են, որ անգլիական նոր դեսպան Գօշեն կը հասնի Կ. Պոլիս հինգշաբթի կամ ուրբաթ և անյապաղ կը սկսի իր գործի կատարելը։ Այն գործողութիւնը, որ վերաբերում է պետութիւններից Բ. Դրանը ուղղած միատեսակ պահանջի կազմելուն, կը սկսվի այն ժամանակ, երբ Գօշեն հարկաւոր տեղեկութիւններ կը հաւաքի Կ. Պոլսի մէջ։ Ինչպէս լսվում է այդ միատեսակ պահանջի ընդգրի կազմելը կը կատարվի Կ. Պոլսի մէջ դեսպանների ընդհանուր աշխատանքներով։ Այդ դոկումենտով Բ. Դրնից կը պահանջվի, որ նա իրագործի Բերլինի դաշնագիրը Հայաստանի, Զերնոգորիայի և Յունաստանի վերաբերութեամբ և այժմեանից երաշխաւորի այն տեղի ապահովութիւնը, որտեղ կը հաւաքվի սահմանները որոշող մասնաժողովը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մայիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 75 կ., երկրորդ 92 ր. 37 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 62 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 226 ր. 75 կ., երկրորդ 220 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 62 կ., երկրորդ 90 ր. 75 կ., երրորդ 90 ր. 62 կ., ոսկի 7 ր. 77 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 25¼ պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 215 մարկ 50 պֆ., Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան Վարչութիւնը պատիւ ունի յայտնել, որ արդէն դուրս եկան մամուլի տակից և ծախվում են Թիֆլիսի բոլոր գրավաճառների մօտ ընկերութեան տպագրութիւնները:

№ 4 ԲԻՋԵՐ-ՍՏՕՈՒ. ԹՈՎՄԱՍ ԵՂԲՕՐ ՏՆԱԿԸ, հոխ. երեխաների համար Պաղմէր, թարգ. օր. Ս. Տէր-Մարկոսեանի: Պատկերազարդ և կազմած—60 կ.:

№ 5 ՄՈՐԵՒ ԵՒ ՆՈՐԱՆ ԶՆԶԵԼՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ. աշխ. Տէր-Բարսեղեանցի: Գինն է 10 կոպէկ:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով՝ Въ Тирфлисъ, Тифлисское Общество изданія армянскихъ книгъ.



Իր յատկութիւններով մարմնի մասերի, մանաւանդ ոտքի մասների քրտինքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը,

ԳԱԼՄԱՆԻՆ

անունով, ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների դեղատներում և դրոգիստների մօտ: Գլխաւոր դէպօ նիւթի հնարող Ֆարմացիի մագիստրոս Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ դեղատան մէջն է գտնվում, Վարշավայում, Էլէկտորալնի փողոց, № 35: Գալմանինի մեծ արկղիկը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ.: Պէտք է ըզգուշանալ խարդախումներից:

7—25 (1) Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ

ՄԻ ՀՈՒՆ սէտերի տեսակից, սև գոյնի, սպիտակ բիծով կուրծքի վրա, որձ, «Տիւդօր» անունով, կորաւ Ալէքսանդրեան այգուց, ապրիլի 28-ի գիշերը: Գտնողին խնդրում են հասցնել Օուբալովի տան, կօնդիտէր Կելբէրի մագազինից վերև գտնված Պօլտարացկու բնակարանը, Ստեփան Ծռերետելիին օրինաւոր վարձատրութեամբ:

3—3

УПРАВЛЕНІЕ

Поти Тифлисскаго участка Закавказской желѣзной дороги доводитъ до всеобщаго свѣдѣнія, что съ 10-го сего мая возстановляется движеніе пассажирскихъ поѣздовъ между станціями Тифлисъ и Мцхетъ, но съ пересадкою у станціи Авчалы. Росписаніе отхода поѣздовъ изъ Тифлиса—прежнее, за исключеніемъ поѣзда № 8, (пятичасоваго) который до увѣдомленія отправляемъ не будетъ.

1—1

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բաթենեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրով վիներական և բողազի հ., Բէյլս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդկովսկի ներքին հ., Շտէյմբօրսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բողազի հ., Բաթենեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստվածատուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ ազքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւօտեանոյժ Օբրեխտ ազքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

«ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՈՎ, ԵՒ ԸՆԿ.»

ԱՌԱՒՕՏԱԿԱՆ ՏՈՒՆԸ սրանով յայտնում է, որ դնումներին մինչև նոր փոփոխութիւնը վըճարում է:

1) Հասարակ և պայմանաւոր ընթացող հաշիւներին	4½%
մինչև պահանջելը	4½%
2) Ժամանակաւոր մուտքերին. 6 ամսով	6%
9 ամսով	6½%
1 տարով	7½%
1½ տարով	8%
2 տարով և աւելի	8½%
3) Մասնաւոր դնումներին առաջին կարգի պայ ունեցողներին	9%
Գումարներ տալու ժամանակ վերցնում է մի ամսվայ ընթացքում	10%
« շաբաթվայ	9%

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ տան ԳՐԱՍԵՆԵԱԿԸ գտնվում է Թ. ԹՈՒՄԱՆՕՎՆԵՐԻ տանը, Ալէքսանդրեան այգու դիմացը և բաց է մուտքեր ընդունելու և վերցրած պարտքերի հանդցնելու համար ՀԱՍԱՐԱԿ օրերը առաւօտեան 8—2 ժամը, իսկ ՏՕՆԵՐԻՆ առաւօտեան 8—10 ժամը:

1—3 (2)

ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՈՎԻ ԵՒ ԸՆԿ.
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Յայտնում է հասարակութեանը, որ ցանկացողները կարող են առնել 1 և 2 ներքին 5% փոխառութեան տոմսակները յետաձգութեամբ վճարելով մի տարվայ ընթացքում և աւելի երկար ժամանակամիջոցում, նոր և շատ շահաւէտ պայմաններով, որոնց մասին տեղեկանալ կարելի է նոյն իսկ կանտորայի մէջ, որ նոյնպէս առնում է այդ տեսակ տոմսակներ: Գրասենեակը գտնվում է Ալէքսանդրեան այգու հանդէպ, Թումանովի տանը:

9—10

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՎՍԷՍԵԱՆ
ԲԷՀԲՈՒԹԵԱՆՑ

Որ հայոց փողոցում ամաններ է ծախում, խնդրում է այն անձը, որ նրան երեք նամակ է ուղարկել քաքաքային փոստայով, բայտնել իրան թէ ի՞նչ հասցէով պէտք է ուղարկել պատասխանը, որովհետև նամակները տարաբերված չեն և նրանց վրա նշանակված չէ հասցէն:

Յովհաննէս Մ. ԲԷՀԲՈՒԹԵԱՆ

Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստվածատուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ ազքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւօտեանոյժ Օբրեխտ ազքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների տարեկան հարցաքննութիւնները կըսկսուին մայիսի 15-ին և կը շարունակուին մինչև ամսի վերջը, հետևեալ կարգով:

Մայիսի 15 և 16-ին Կուկիու Թանդոյեան օրիորդական ուսումնարանում.
« 17 — Կուկիու Ս. Աստուածածին եկեղեցու ուսումն.
« 19 և 20 Կաթողիկէ Ս. Գէորգ եկեղ. ուսումն.
« 22 — Հալաբարի Ս. Մինաս եկեղ. Եղմիրեան ուսումն.
« 23 — Զուղուրէթի և Ս. Կարապետ եկեղ. ուսումն.
« 24 — Զորաբաշի և Շամքոռեցոց եկեղ. ուսումն.
« 27 և 28 Հալաբարի Մարիամեան օրիորդ. ուսումն.
« 30 և 31 Զզրաշէնի ուսումնարաններում:

Թեմ. վեր. Դ. Բարխուդարեանց

1880

ԹԻՖԼԻՍ

ԿԻՐԱԿԻ, ՄԱՅԻՍԻ 18-ԻՆ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԱՍԷՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

I

ԽԵԼԱԳԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Հեղ. Գոգոլի, թարգ. Ց. Տէր-Գրիգորեանի

II

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԽՆԴԻՐՈՎ,

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ

ՀԱՇՏԱՐԱՐ ԴԱՏԱՒՈՐԻ ՄՈՏ

Կոմեդիա 3 արար., ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ Ց. Տէր-Գրիգորեանի

Անցքը պատահում է ԹԻՖԼԻՍՈՒՄ

III

ԶԱՒԵՇՏ

1) Պատկերներ ժողովրդական կեանքից, ԲԺԻՇԿ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵՍՆԻ կը պատմէ

պ. Ց. Տէր-Գրիգորեան

2) Տ. Փաշայեան-Տէր-Գրիգորեան կերդէ բօմանսներ, ի միջի այլոց «ԳԻՇԵՐԸ ԳՐԵՆԱԴԱՑՈՒՄ» երաժշտութիւն Շիֆֆի:

Տեղերի գինը ՍՈՎՈՐԱԿԱՆ է:

Տոմսակները թէ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ օրը և թէ ՎԱՂՕՐՕՔ կարելի է ստանալ ԱՐԾՐՈՒՆՈՒ Թատրոնի կասսայում, ԱՄԵՆԱՑՆ օր առաւօտեան 10—2 և երեկոյեան 6—8 ժամը:

2—5

ՆԻՈՒ-ԷՕՐՔԻ ԶԻՆԳԵՐ

Ամենամեծ կարելու մեքենայի ընկերութեան աշխարհային համբաւն բաւական ըլլալով յանձնել իրեն ձեռագործութիւններն կազմուածքին պարզութեամբը, հաստատութեամբը և այլապերպ աշխատութիւններն կատարելով, տնական և արուեստաւորներու պիտոյից համար, կը համառօտէ զմեզ համրելու մէկիկ մէկիկ իրենց գերազանցութիւնն ուրիշ հնարուած նման առարկայից վրա:

Վերոյիշեալ Նիու Յօրքի Զինկեր ընկերութիւնը այս ապրիլի սկզբներն բացաւ ուրիշ գլխաւոր քաղաքներու պէս, հոս ևս՝ Թիֆլիս շտեմարան մը այլ և այլ կարելու մեքենաներով, Ատամանակի փողոցն, Օուպալովին տունն, Երևանի հրապարակի մօտ անմիջապէս և կը խնդրուի խաթունայց և պարոնայց ուզող ստանալ այսպիսի մեքենայ դիմել հոն միայն և կը խնդրուի միանգամայն չը խառնակել այս բնիկ նորքաց շտեմարանն ուրիշ վաճառականներու հետ, որոնք միայն Զինգերի սուտ անուամբ նշանակներով և պատկերներով կը խաբեն մեր պաշտպանաւորներն և դժբաղդաբար իրենց մեքենաներով կը տարակուսացունեն սեպհական մերոնց լաւութեան անունն:

Ուրիշ քաղաքներու բնակիչք ալ կրնան դիմել մեզ նամակով թէ մեր ընթացիկ գիներուն ցուցակն ուղելու համար, որ կը խրկեմք ձրի և թէ որ և է տեղեկութիւն հարցունելու համար, որոնց կը պատասխանեմք նմանապէս մի և նոյն լեզուով և կարելի արագութեամբ, մեր երեսագիրն է:

Г. Нейдлингеръ. Тифлисъ.

Գ. Նայդլինկեր

Գլխաւոր հոգաբարձու ամբողջ Ռուսաստանի և միջին Եւրոպայի:

Խանութի մէջ կարելի է ուղղել խանգարված մեքենաները:

3—3 (2)

Дозволено Цензурою 13 Мая 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона